Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N 2497 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի N834-Ա-ից N848-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N849-Ա -N850-Ա և 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N851-Ա - N869-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N 837-Ա որոշման մեջ հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է կատարված, բացի այդ որոշման 4-րդ կետում «որոշման» բառից առաջ անհրաժեշտ է գրառել «սույն» բառը։

2. N840-Ա, N846-Ա, N861-Ա և N866-Ա որոշումների նախաբանում հղումները ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներին թերի են գրառված։

3. N845-Ա և N854-Ա որոշումների մեջ հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է կատարված։

4. N850-Ա որոշման վերնագրում «փոփոխություն» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «լրացում» բառը։ Որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի փոխարեն անհրաժեշտ է հղումը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին, բացի այդ որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներին։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար 2022 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ թիվ 837-Ա, 840-Ա, 845-Ա, 846-Ա և հոկտեմբերի 20-ի թիվ թիվ 861-Ա, 866-Ա որոշումների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 866-Ա որոշման մեջ նշված չեն հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները: Որոշման մեջ ՀՀ կառավորության 2006 թվականի մայիսի 18-ի <<ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի ա) և բ) ենթակետերին կատարված հղումները սխալ են, հղում պետք է կատարել նույն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի բ) ենթակետին:

Համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ թիվ 837-Ա, 840-Ա, 845-Ա, 846-Ա և հոկտեմբերի 20-ի թիվ թիվ 861-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Զ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.11.2022թ.

Կատարող՝ Հ. Նալբանդյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարգելի պարոն Անտոնյան

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի № 837-Ա որոշման մեջ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին կատարված հղումները թերի են:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի № 866-Ա որոշման մեջ չի նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակություններն, իսկ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 13-րդ կետի ա) և բ) ենթակետերին կատարված հղումների փոխարեն անհրաժեշտ է հղում կատարել նույն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի բ) ենթակետին:

Համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի № № 840-Ա, 846-Ա և հոկտեմբերի 20-ի № 861-Ա որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Խ. ԽՆԶՐՅՅԱՆ

Կատարող Արմենուհի Մկրտչյան
Հեռ. (0312) 49000*166